ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անուն Ազգանուն – Անահիտ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը – Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները – Ժնև, Շվեյցարիա, 2018 թվականի օգոստոսի 22-24

4. Հրավիրող կողմը – Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը – Մասնակցություն դեղերի և բժշկական նշանակության ապրանքների մատակարարման շղթայի վերաբերյալ խորհրդատվական հանդիպմանը

6. Քննարկված թեմաները

Հանդիպմանը հրավիրված էին մասնակցելու ԱՀԿ անդամ-պետությունների առողջապահության նախարարությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ:

Հանդիպման ընթացքում մասնակիցներն ու փորձագետները միմյանց տրամադրեցին տեղեկություններ դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ոլորտում առաջացած ռիսկերի և մարտահրավերների վերաբերյալ: Քննարկվեց մատակարարման շղթայի ապահովման հեռանկարային տարբերակների նույնականացման հարցը (քաղցկեղ, շաքարային դիաբետ և այլ ոչ վարակիչ հիվանդություններ):

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպմանը քննարկվեցին դեղերի և բժշկական նշանակության ապրանքների մատակարարման շղթայի ամբողջականության ապահովման առնչվող

հարցերը՝ հնարավոր խոչընդոտներն ու բացթողումները, ռիսկերի առաջացումը, գործընթացի վերահսկողությունը և այլն:

Համաժողովի ընթացքում ելույթով հանդես եկավ Առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանը: Ներկայացվեցին Հայաստանում վարակիչ հիվանդությունների դեղերի գնումների գործընթացի, դեղորայքի գրանցման առանձնահատկությունները: Երկկողմ հանդիպումների ժամանակ քննարկվեցին քաղցկեղի դեմ պայքարի դեղորայքի հասանելիության ապահովմանն առնչվող հարցեր, հեպատիտ Ց-ի բուժման դեղերի ձեռքբերման հնարավոր մատչելի տարբերակների հնարավորությունը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ընթացքում մշակվեցին խորհրդատվական բնույթի դիտարկումներ, թե ինչպես կարելի է միջազգային կազմակերպությունների դեղորայքի մատակարարման շղթայի վերաբերյալ փորձն արդյունավետ օգտագործել անդամ երկրներում:

9. Առաջարկությունները

Առաջարկվեց խորացնել Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ դեղերի և բժշկական նշանակության ապրանքների մատակարարման ոլորտում համագործակցությունը, զարգացնել երկկողմ գործակցությունը անդամ երկրների հետ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

2018թ. օգոստոսի 30